

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ - ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ
ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊՐԱՅՈՒՄ 2009-2011 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 55-րդ հոդվածի 7-րդ կետով՝ ո ռ ո շ ու մ ե մ .

1. Հաստատել Եվրոպական հարևանության քաղաքականության Հայաստանի Հանրապետություն-Եվրոպական միություն գործողությունների ծրագրի կատարումն ապահովող 2009-2011 թվականների միջոցառումների ցանկը՝ համաձայն հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության կառավարությանը՝ ապահովել միջոցառումների ցանկով նախատեսված ծրագրերի իրականացումը՝ համաձայն ժամանակացույցի:

3. Հայաստանի Հանրապետության Նախագահի 2008 թվականի սեպտեմբերի 8-ի ՆԿ-149-Ա կարգադրությամբ ստեղծված միջգերատեսչական հանձնաժողովին՝ հետևել միջոցառումների ցանկով նախատեսված ծրագրերի իրականացմանը, համակարգել այդ նպատակով հանձնաժողովի կողմից ստեղծված աշխատանքային խմբերի գործունեությունը և Հայաստանի Հանրապետության Նախագահին եռամսյա պարբերականությամբ ներկայացնել ամփոփ հաշվետվություն կատարված աշխատանքների վերաբերյալ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Ն Ա Խ Ա Գ Ա Հ

Ս. ՍԱՐԳՍՅԱՆ

2009թ. մայիսի 6

Երևան
ՆԿ- 68 -Ա